

## ՏՂԱՄԱՐՂՈՒ ՄՈՏ ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՐԻ ՄԱՍՏԵԿՏՈՄԻԱՅԻՑ 18 ՏԱՐԻ ԱՆՑ ԳԼԽՈՒՂԵՂՈՒՄ ՄԵՏԱՍՏԱԶՆԵՐԻ ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփաննա Մ.Ա., Ռոսին Դ.Լ., Իսրաբեկյան Լ.Ա.

Մոսկվայի Ն.Ն.Բուրդենկոյի անվ. Նեյրոպիրաբուժության ինստիտուտ, Մոսկվա, ՌԴ

Հանձնված է՝ 10/21/2014թ., ընդունված է՝ 08/11/2014թ.

Տղամարդու մոտ կրծքագեղձի քաղցկեղը հազվադեպ հանդիպող հիվանդություն է և կազմում է տղամարդկանց չարորակ ուռուցքների 0.2-1%-ը: Այս քաղցկեղի հեռավոր մետաստազները հանդիպում են հիմնականում ոսկրերում, նկարագրված են դեպքեր լյարդում, թոքերում, մաշկի վրա, ստորին ծնոտի հողում, քթի ոսկրերում, գլխուղեղում, իսկ կրծքագեղձում հեռավոր մետաստազներ հազվադեպ են հանդիպում: Վերջինիս վերաբերյալ գրականության մեջ կա ընդամենը երկու դեպքի նկարագրություն:

Արական սեռի 44 տարեկան հիվանդի մոտ 1994 թ. հայտնաբերվել է աջ կրծքագեղձի քաղցկեղ: Պացիենտը ստացել է նեոադյուվանտ քիմիաթերապիա, որից հետո կատարվել է ռադիկալ մաստէկտոմիա:

2006 թ. ապրիլին հիվանդը գոտկային հատվածի ցավերի կապակցությամբ կրկին հետազոտվել է, թոքերում և ոսկրերում հայտնաբերվել են մետաստազներ: Անցկացվել է քիմիաթերապիա, որից հետո դիտվել է վիճակի լավացում: 2012 թ. առաջացել են գլխացավ, գլխապտույտ և հիշողության վատացում: Մագնիտո-ռեզոնանսային տոմոգրաֆիկ հետազոտության միջոցով աջ կիսագնդի քունքային բլթում հայտնաբերվել է 7-6-5 սմ չափսերի մետաստատիկ ուռուցք: Պոզիտրոն էմիսիոն տոմոգրաֆիայով հայտնաբերվել է երկու կիսագնդերի բազմաօջախային ախտահարում: Կատարվել է աջ կիսագնդի քունքային բլթի ուռուցքի հեռացում: Անցկացվել է ճառագայթային բուժում: Հիվանդը դուրս է գրվել առանց նևրոլոգիական ախտանիշների: Վիրահատությունից մեկ ամիս անց, հիվանդի վիճակն եղել է բավարար: Նման հիվանդների բուժման ընթացքում վիրաբուժականին գուլգահեռ վճռական նշանակություն ունեն քիմիան, հորմոնաթերապիան: